ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11 դեկտեմբերի, 2015 թ. ք. Երևան

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» աշխատաժողով

Սույն թվականի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանի «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրում Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ՀՀ արդարադատության նախարարության և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի հետ համագործակցությամբ կազմակերպեցին «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» աշխատաժողովը:

Աշխատաժողովը կազմակերպվել էր ԵՄ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում՝ «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրի համաֆինանսավորմամբ:

«Պետությունը պատրաստակամ է և ջանքեր չի խնայում, որ բիզնես ոլորտում կոռուպցիոն ռիսկերը ևս նվազեն ու տնտեսությունը մրցակցային լինի: Հաճախ այս խնդիրների մասին չի խոսվում, սա երկրորդ հանդիպումն է բիզնեսի հետ, նախկինում միայն խոսվում էր հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի մասին, հաճախ մենք մոռանում էինք խոշոր ձեռնարկությունները, ընկերությունները, մենք մոռանում էինք այն վնասները, որ կոռուպցիան հասցնում է ՓՄՁ-ին», - նշեց Հայաստանում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը:

«Այս խնդիրը ինչպես ԵԱՀԿ-ի, այնպես էլ ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Գրասենյակը աջակցում է քաղաքացիական հասարակությանը և պետական մարմիններին կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև կարևորում է հակակոռուպցիոն կրթությունը», - նշեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը:

«Կոռուպցիան հարվածում է հենց տնտեսության հիմքերին: Կոռուպցիան սարսափելի երևույթ է, քանի որ այն խաթարում է արդարության սկզբունքները», - նշեց Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Խոսե Մարիա Մեդինա Նավարոն:

«Եթե չբարձրաձայնվեն խնդիրները, դրանք իրենց լուծումները չեն ստանա: Այս առումով մենք ողջունում ենք այն բիզնես կազմակերպություններին, որոնք սկսել են խնդիրները վեր հանել ու դրանք պատկան մարմիններին ներկայացնել, քանի որ այդ գործողությունից հետո միայն հնարավոր է դրանց լուծումներն առաջարկել», - նշեց Հայաստանում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը:

«Շատ կարևոր է բիզնես-պետություն հարաբերություններում կոռուպցիոն գործարքների և դրսևորումների նվազեցումը: Երբ մենք ավելի խորն ուսումնասիրում ենք կոռուպցիայի, այսպես ասած, անատոմիան, մենք տեսնում ենք, որ հիմնական այն գալիս է ընտրված տնտեսության մոդելից: Բնականաբար, եթե մենք ունենանք իսկապես ազատ շուկա և ազատ մրցակցություն, կարձանագրենք կոռուպցիայի նվազեցում», - նշեց «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ Հայաստանում բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերի ու բարեխղճության հիմնախնդիրների վերաբերյալ:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 15.600 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ. փոստ՝ pr@ayla.am:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս +374 10 229610
Հեռապատճեն +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում: